

սական պիտոյքը կհոգայ. բայց բարեխառն գօտեյ ընակիչք ականայ պէտք է աշխատեն, որ իւրեանց օրական սնունդ գտնեն: Այս պատճառաւ էլ բարեխառն և սառուցեալ գօտեայ ընակիչք պատերազմելով ընտլման հետ, յաղթեցին ընտլման, նորա բոլոր գաղանիքը իմացան և պատերազմով մարդիկ զարդացան և կարողացան ուսմունք և արհեստներ ծագկեցնել: Չնայելով որ Ամերիկան 1492 թ. գտնուեցաւ, այնուամենայնիւ այս բոլորին, Աթալից և Ալիքիկէից առաւել ծագկեալ է. ի՞նչ է սրա պատճառը, ո՞չ պէլ ի՞նչ՝ եթէ ո՞չ ընակչաց աշխատութիւնը և առաջագիտութիւնը (Ապա ուրեմն և չք Հայեր, բարեխառն գօտեյ ընակիչք գոլով, աշխատենք՝ որ առաջ գնանք, ուսմամբ ու կրթութեամբ ծագկենք, և մեր ուսմամբ և հարստութեամբ կարողանանք լինել ամուր պարիսպ և պաշտպան մեր Ս. Եկեղեցւոյ և Հայրենեաց):

Մարդկանց

ԱՐԻՒՄԻՉ ԳԻՒՐԻՉ ԱՐԷՆԷԱՆԿ:

ԱՄՈՍ ԿՈՄԵՕՆԻՈՒՍ ԻՒ ՆՈՐԱ

ՏԻՏԱԳԻՒԳԱ ԻՄԱԿՆԱ

Ծխական, Թեմական և Վանական ուսումնարանները, որոնք մեզանում շուտով բացուելու են, ի հարկէ մեծ նորոգութիւն պէտք է ձգեն Հայկական կեանքի մէջ: Բայց որքան ցանկալի բան է այդ ուսումնարանների բացուիլը, այնքան ևս դուքա, պէտք է խոստովանել, դժուարութիւններ կը ծնանին սկզբում՝ իւրեանց գործադրութեան ժամանակ: Մեր հասարակութիւնը միանգամայն պատրաստուած չէր այդքան ուսումնարաններ իւր զոգը ընդունելու: Ուսումնարան հիմնելը բաւական չէ, այլ հարկաւոր է, որ հիմնած ուսումնարանը օրինաւոր կերպով ծաղկի. և ահա այն ժամանակ միայն մենք կարող ենք վստահ լինել, որ կրթայելիք դուրս պտուղները: Արքան ուսումնարաններ կը հիմնուին, այնքան ևս մարդիկ պէտք է ունենանք, որպէս զի ուսումնարանական գործը կառավարեն. մենք այդպիսի մարդիկ դեռ չունինք պատրաստ: Այս ասելով՝ մենք մտադիր չենք երկնել այն արդիւնքների մասին, որ բերելու են այդ

ուսումնարանները: Այլ, մենք կամենում ենք միայն ասել, թէ ուսումնարաններ հիմնելուց յետոյ՝ մենք դեռ շատ դործ կունենանք կատարելու. կամենում ենք ասել, թէ ուսումնարաններ հիմնելով՝ մենք մի և նոյն ժամանակ այնպիսի կենսական նոր պահանջմունքներ ենք ստեղծում, որ պէտք է անշուշտ լցուցանենք:

Բայց որ ճանապարհով մենք պէտք է լցուցանենք այդ պահանջմունքները: Ի հարկէ՝ մենք կտրուկութեամբ չենք պարտի այնքան ժամանակ, մինչև որ երկար փորձը մեզ ցոյց տայ այն, ինչ որ ուրիշ ազգերի փորձը արդէն վաղուց ցոյց է տուել: Այդպէս չենք պարտի, վասն զի անպտուղ կը լինէր մեր աշխատանքը. մենք շատ յետ ենք մնացել յիշեալ ազգերից. ուստի մեր սեպհական աշխատութիւններով՝ առանց նոցա օգնականութեան, երբէք նոցա բարօրութիւնը վայելելու չենք: Մեզ մնում է ուրեմն նոցա հետեւել. բայց հետեւել՝ խեղացութեամբ և ո՞չ վայր ի վերջոյ. Եւրոպան՝ ուսումնարանական գործը այնքան մշակեց և մշակում է մինչև հիմայ, որ զաւթմ մի առանձին և բաւականին ընդարձակ լղիտութեան ծիւղ է դարձել, որ և մանկավարժութիւն է կոչվում: Ահա մենք պէտք է մարտնք այդ գիտութիւնը. մարտնքը գործ դնենք մեր ուսումնարաններում, որ դոցանից իրաւի ստանանք [համեմատ և հասուն պտուղներ, և ապագայում վայելենք նոցա շնորհները: Այդ գիտութիւնը, ինչպէս և ամենայն գիտութիւն, հեշտ սովորելի բան չէ: Սկզբում միայն անձնատուր նախընտրել կարապին այդ գիտութեամբ: Այդ նախընտրելի գործունէութեան ապագայը շատ խախտու կ'լինի, եթէ հասարակութիւնը ինքը չի օգնել և մասնակից չի լինիլ դոցա գործունէութեան: Հասարակութիւնը նախ ինքը պէտք է զոյս մանկավարժութեան անհրաժեշտ կարեւորութիւնը և պիտանութիւնը, որ մանկավարժներին հաւատընծալի: Աւրեմն ո՞վ որքան կարող է, պարտական է այնքան աշխատել, որ իւր օժանդակութեամբ հասարակութեան մէջ այս կամ Հայն միջոցներով՝ առողջ մանկավարժական մտքեր տարածուին. այդ է միակ հնարն, որով ուսումնարանների համար պիտանի մարդիկ կը պատրաստուին: Մենք հա-

մոզուած ենք, որ այսպէս կամ համարեալ թէ այսպէս՝ շատերը մտածում են, և դո՛ւք ենք որ այս ծանաչողութիւնը մի նոր իրողութիւն է։ Այդ մտածող պարոնների մէջն էլ ՚ի հարկէ կրօնաւորն և այնպիսի անձինք, որոնք ՚ի լոյս կրնծայեն յիշեալ նպատակի համար՝ մանկավարժութեան վերաբերեալ մատեաններ, և նոցա այդ ծառայութիւնը՝ հասկացող մարդկանց համար մեծ նշանակութիւն կունենայ։ Բայց ինչպէս վերը ասացինք, մանկավարժութեան զիտութիւնը հնչտ է։ Ուստի եթէ սկզբներում մենք կաշխատենք այնպիսի մատեաններ տարածել, ինչպէս առհասարակ օտարազգի դրականութեանց մէջ տարածում են, զորս մեզանում քիչ օգուտ բերելու են։ Այդ մատեանները ուսումնականների առանձնասենեկական մատեաններ կը դառնան, և հասարակութիւնը օգուտ քաղելու չէ նոցանից։ Բողնելով ունիշ տեղեկութիւնները, որ հասարակութիւնը պէտք է ունենայ այդպիսի գրքեր կարդալու համար, մենք կասենք, թէ նախ և առաջ նա պէտք է ուսումնական լեզուին ընտելանայ, որին զեռ ընտելացած է։ 2-ինը կարծում, որ մեր ասածը զբարտառութիւն է՝ եթէ փորձը ցոյց կը տայ, որ ասածներս անհիմն և սխալ էին, մենք առաջինը կուրախանանք։ Բայց քանի մենք զգում ենք մեր համազմունքի ճշմարտութիւնը, կամենում ենք այստեղ մանկավարժական ճշմարտութիւնները հաղորդել լեզուի այնպիսի մի ոճով, որով սովոր է խօսակցել մեր հասարակութիւնը, և որը հետեւաբար աւելի ազդու և հասկանալի պէտք է լինի նորա համար։ Յետագայ յօդուածի հեղինակը, Ամոս Առնոլդիւսը, իւր աշխատութիւնը գրել է 17 դարու մարդկանց համար, երբ մանկավարժութեան զիտութիւնը զուգէ՝ այն աստիճանի վերայ էր, որ աստիճանի վերայ այժմ մեզանում է ուստի նորա գրութեան ոճը շատ համապատասխանում է այժմեան մեր հասարակութեան մտաւոր զարգացմանը։ Միայն այդ պատճառը չէր՝ որ մենք արժան դատեցինք այս յօդուածը մերայնոց ազդորդել. սորա հեղինակը՝ թէ և 17 դարու զանակ է, բայց այնքան բնազդօրէն զգում էր մանկավարժական ճշմարտութիւնները, որ նորա մրտ-

քերը երեկի Աւրոսթան ուսումնարաններում ևս՝ զեռ նոր են սխում գործադրել, նորա այս երկու առաւելութիւնը ՚ի մտի ունելով, ոչ ապաքէն արժէր դորա գրուածքի ծաղկաքաղութարգմանը։ Մենք այս յօդուածով կամենում ենք ծանապարհ բաց անել մանկավարժական ուրիշ առաւել նոր ուսումնական գրքերի համար, որոնք հաւաստիքներով և փաստերով կհաստատեն այն, ինչ որ այս տեղ Առնոլդիւսը, թէպէտ և շատ անգամ թոյլ ապացոյցներով, բայց միշտ իրեւ ռակեղէն ճշմարտութիւններ է յայտնում և միշտ հիմնուելով միայն իւր ճշմարիտ մանկավարժական բնազդութեան վերայ։

Յետագայ յօդուածը Լատիներէնից Ռուսերէն թարգմանեց Պ. Պաուլսընը, որն որ նա տպեց իւր խմբագրութեամբ հրատարակուող "Учитель" կիսամսնակութիւնի մէջ։ Հարկաւոր ենք համարում այս տեղ նախ և առաջ Պ. Պաուլսնի մի քանի խօսքերը բերել Առնոլդիւսի կենաց, աշխատութեանց, և նշանակութեան մասին։

"Այն մանկավարժների շարքում, որոնք խորին ազդեցութիւն են ունեցել ոչ միայն իւրեանց ժամանակի, այլ և հետագոր ժամանակի հասարակաց կրթութեան վերայ, ընտիրներից մէկն է Պ. Առնոլդիւսը։ Կամ Պ. Առնոլդիւսը, — այսպէս են կոչում նորան "գիտութիւն մանկավարժութեան" պատմութեան մէջ, — որը 17 դարումն էր կենում։ Մեղանում (Ռուսաստանում) այս մանկավարժը բնաւ յայտնի չէ։ այն ինչ և նորա անձը, և մանաւանդ նորա գրուածքները միանգամայն արժանի են, որ նորա հետ ծանօթանանք։ Նախ և առաջ Առնոլդիւսն է ինչպէս ինչպէս որդի (*): Այսօր ամենեցուն յայտնի կանոնները թէ "սովորեցրու շօշափելի կերպով", "սովորեցրու աշակերտներին յայտնի բաներից յետոյ՝ անյայտը, հնչտից յետոյ՝ դժուարը", և այլն. առաջին անգամ Առնոլդիւսից լսուեցան։ Նորա "Պիդակտիկան" կարգալով, դժուար է հաւատալ, թէ այն տեղ բացատրուած կանոնները 17 դարու, և ոչ

(*) Ռուսացանկու տրուեալ, այդ բառը Հայերէն վարդապետութիւն, բառով են թարգմանում։

[Թէ 19 դարու պտուղ է, մանաւանդ որ այդ կանոնների այդքան հնու[թիւնը չի երևում այժմեան մանկավարժների դասատուութեան մէջ, Ընդհակառակը, տեսնելով՝ թէ մեր (Ռուսաց) վարժապետների մեծ մասը Բնական և ուսուցանում, ակամայ կարելի է կարծել, թէ մինչև այսօր դեռ չկան դասատուութեան որոշեալ առաջնորդական կանոններ, Երկրորդ՝ Սոմեօնիուսը ըստ ժամանակի համարժեք է (Իրաւիստ)։ Նա է՝ որ առաջին անգամ ամբաստանում է սքոլաստիքական, դպրոցական ուսումը։ Նա է՝ որ առաջին անգամ պահանջում է իրերի և ոչ բաների ուսանելը։ Նա է՝ որ առաջին անգամ մայրենի լեզուն գերադանց է դասում՝ քան օտարազգի լեզուները, կենդանի լեզուները գերադանց՝ քան մեռեալները, միով բանիւ, Սոմեօնիուսի Դիդակտիկայի հրատարակութեան հետ միայն լսուում է առաջին բոլորը ընդ դէմ Հռոմանիքական կոչուած կրթութեան, և պատերազմ է ծագում Բեալիզմի և Կլասիցիզմի մէջն

"Սոմեօնիուսը շատ մանկավարժական գրութիւններ թողեց իւր մահից յետոյ։ Միայն նորա հետնորդ Գեորգի Կոչեցեալ շարադրութիւնները 1000 է. հաշիւ երեսից աւելի բռնում են։ Նորա բոլորը Լատինական լեզուով են գրած, վասն զի ուրիշ լեզուով գրելով՝ նա իւր ժամանակակիցների մէջ կարգացող մարդիկ չէր գտնի։ Այդ գրութիւններից նշանաւորները սոքա են։

1) Ժամանակակիցութիւններ (լեզուների բաց դուռն)։ Արիւրյոս ընծայեցաւ 1631 թուին, և բացատրում է լեզուներ ուսուցանելու, մանաւանդ Լատինական լեզու ուսուցանելու նոր եղանակը։ Այս գրութիւնը մասին, որ 12 Եւրոպական և մի քանի արեւելեան լեզուների թարգմանուեցաւ, Բէյլ, անցեալ դարու զաղրկացի մատենագիրը ասում է՝ "եթէ Սոմեօնիուսը բացի այդ գիրքը՝ ուրիշ ոչինչ չհրատարակէր, նա այնու ամենայնիւ անմահ հուշարժիւն կստանար"։

2) Օրէնքներ (կենդանագիր աշխարհ)։ Սա մի գրութիւն է, որ մեծ համբաւ ստացաւ և անհամար թարգմանութիւնների և հետեւութիւնների առարկայ դարձաւ։ Այդ գիրքը պարունա-

կում է իւր մէջ, ինչպէս և ճառում է դիւստրիք, լատինական աշխարհը պատկերներով նկարած և Լատինական բնագրով բացատրուած։ Սկսում է նա այն տառերից, որոնց հնչիւնը կենդանիների մէջ ևս լսուում է, իսկ վերջանում է հետևյալ հին դիւստրիքային բացատրութեամբ։

3) Գեորգի Կոչեցեալ (այսինքն հրահանգ ուսումնարանական ուսուցանելու)։ Այն ինչ առաջին երկու գրութիւնները՝ այժմ միայն պատմական նշանակութիւն ունին, այս վերջինս շատ հետաքրքրական է մեզ համար և տեսութեան կողմանէ։ Ուստի մենք ևս կամենում ենք այս գրութիւնը հետ ծանօթացնել ընթերցողներին։ Բայց նախ մի քանի խօսք ասենք Սոմեօնիուսի առհասարակ կենաց և գործունէութեան մասին։

3-Վերջին և Կոչեցեալ ծնաւ Մորաւիայում, Նիմբուրգ քաղաքում, 1592 թուականին։ Նորա ծնողները, որոնցից նա մանկութեան հասակին զրկուեցաւ Սլաւոնացի ու Բոհեմեան ուխտիցն էին, և որպէս Սոմեօնիուսի զիւղաբաղաբի բնիկ երկրացիներ, Կոչեցեալ կոչուեցան։ Իսկ Ամստը, իւր ժամանակի ուսումնականների սովորութեամբ, նախ վերջաւորութիւնը լատինական էր վերջաւորութեան փոխելը։ Ազգականներից առանց խոնամքի թողուած լինելով, Սոմեօնիուսը միայն 14 տարեկան հասակին սկսեց ուսումնարան այցել։ 1612 թուականին, ուրեմն 20 տարեկան հասակին, նա նախ Հերրորնեան համալսարան (նաստուի դաւառում) մտաւ, իսկ յետոյ Հէյդելբերգեան համալսարան, բայց արդէն 1614 թուին հայրենիք վերադարձաւ, ուր նախ Լատինական ուսումնարանի Տեսուչ կարգուեցաւ, և ապա 1618 թուին քահանայ և Ֆուլնէկի ուսումնարանների բարեկարգիչ։ Սորանից երեւում է, որ Սոմեօնիուսի գործնական կեանքը սկսում է Եւրոպական երեսնամեայ պատերազմի հետ միասին, և ուրեմն դժուար չէ հասկանալ, թէ նորա կեանքը շատ անհանգիստ և վշտալի էր։ Այստեղ, Ֆուլնէկում արդէն սկսեց զանազան հրահանգներ յորինել։ Բայց 1621 թուին, երբ Խալանիացիները Մորաւիան պաշարեցին, նա ոչ միայն իւր բոլոր

կայքից զընկեցաւ, բայց և կին ու որդիք կորուսեց. անհետացան նա և բոլոր նորա ձեռագիրները, Յետոյ, երբ Ֆերտինանդ Բ. Բոհեմիան առաւ, Վոմեօնիուսը որպէս ոչ Վաթօլիկ, զընկեցաւ նա և իւր պաշտօնից, իւր ուխտի ուրիշ շատ անգամներ չհա միասին Լեհաստան զաղթեցաւ յիտում՝ նա սկսեց Լատինական լեզու ուսուցանել և 1631 թուին հրատարակեց իւր յօդուածը՝ «*De rebus in Bohemia*», որ նորան Եւրոպայում հռչակաւոր անուն տուեց, և առիթ եղաւ Հոլանդական և Անգղիական երկու կառավարութիւններին ևս, որ նորան միատեղ հրաւիրեցին իւրեանց մօտ, այն երկիրներում ուսումնարանները բարեկարգելու։ Վոմեօնիուսը նախամեծար համարեց Անգղիայ գնալ, և 1641 թուին գնաց Լոնտոն։ Բայց Իրլանդիայի ապստամբութիւնը արգելք եղաւ նորան իւր մտքերը դործադրելու, և նա Անգղիան թողեց, որպէս զի գնա ընդունի մի շատ հարուստ վաճառական դեւէրի հրաւերքը, որ Հոլանդիայի նորչեօպինգ քաղաքում էր բնակում։ Այդ վաճառականը, ընկի նիտիլլանդացի լինելով, իւր հարստութիւնները այնպէս առատութեամբ գործ էր ածում հասարակաց գործքերի համար, որ Վոմեօնիուսը նորան միշտ կոչում էր՝ Եւրոպայի մեծ ողորմաբաշխ։ Հոտկհոլմում Վոմեօնիուսը ծանօթացաւ Հոլանդիայի կանցլեր Գրեյնշեյնի հետ, որ նորան քաջալերում էր նոր ի նորոյ հրահանգներ և մանկավարժական գրուածքներ մշակելու։

1646 թուին նա Հոլանդիայում քննութեան համար ներկայացրեց իւր գիտություններն, որի վերայ նա աշխատում էր դեռ 1628 թուականից սկսած, և որը նախ Բոհեմիան լեզուով գրեց, և ապա Լատինական թարգմանեց։ Հոլանդիայի ուսումնականները այդ գրուածքը միանգամայն արժանի դատեցին տպագրութեան։ 1648 թուին մենք Վոմեօնիուսին դարձեալ Լիստումենք հանդիպում, ուր նա իւր կրօնակիցներից եպիսկոպոս է ընտրուում։ Յետոյ նա, Ռոգոցկու հրաւիրանք, գնում է Վաճառաստան, ուր ուսումնարանները բարեկարգում է։ Վաճառաստանում ևս վերջացնում է իւր Օրէնքի գիրքը, որ 1657

թուի առաջին, իսկ 1659 թուին երկրորդ տպագրութեամբ և բազմաթիւ՝ նիւրներերգում պղծնէի վերայ փորագրած պատկերներով հրատարակուեցաւ Լիսապոլ վերադառնալով, Վոմեօնիուսը դժբաղդութեամբ նորից զընկեցաւ իւր կայքից, գրատանից և շատ թանկագին ձեռագիրներից։ Վասն զի Լեհերը քաղաքին կրակ էին տուել։ Վոմեօնիուսը Սիլիզիայ փախաւ, այն տեղից Բրանդերուրգեան գաւառը, այն տեղից Համբուրգ՝ և վերջապէս Ամստերդամ, ուր նա անցուց իւր վերջին օրերը, մասնաւոր տներէ մէջ դասատուութեամբ պարապելով և իւր գրուածքները հրատարակելով (վերջիշեալ Գրեյնշեյնի վաճառականի արդեամբ)։ Ամստերդամում նա մեռաւ 81 տարեկան հասակին։

Այժմ քննենք նորա գիտություններն, Վոմեօնիուսը իւր Դիտակտիկան «*մեծ*» է կոչում, այսինքն՝ ընդարձակ, ընդհանուր։ այդպէս է կոչում նա առ ի զանազանութիւն այն Դիտակտիկից, որ նորա նախորդ Օրէնքը 1619 թուին հրատարակեց, անուամբ գրեց, ուր պարտականութեամբ են միայն կանոններ թէ ինչպէս պէտք է լեզուներ ուսուցանել։ Իսկ Վոմեօնիուսը հաղորդում է այնպիսի կանոններ, որոնք վերաբերում են ուսման բոլոր առարկաներին, ուսումնարանական բոլոր կրթութեան։

Առաջին հինգ գլուխներում նա միմիայն մարդուս կրօն վերայ է ճառում, և այս տեղ արտայայտում է նա աստուածաբանի միակողմանի հայեացքը։ Այդ զարմանալի չէ՝ որպէս 17 դարու զաւակ և որպէս աստուածաբան. նա էլ կարող համախոհ չըլինել իւր ժամանակի՝ և իւր պաշտօնակիցների կարծիքներին։ Բայց զարմանալին այն է, որ այդ հայեացքը բնաւ արգելք չեղաւ նորան, որ մշակէ միանգամայն ուղիղ հայեացք կրթութեան և դաստիարակութեան վերայ, որն որ արդէն բացայայտ կարելի է տեսնել յետագայ գրութիւններից, որոնք նորա Դիտակտիկի առանձին առանձին գլուխների գլխագիրներ են։

Գլ. 6. Մարդ կարող է մարդ դառնալ՝ միայն կրթութիւն ստանալով։

Գլ. 7. Մարդու կրթութիւնը առաւել բար-

մարաւոր է առաջին հասակում սկսել:

ԳԼ. 8: Մանուկները ուսումնարանների և կրթ-
թուփեան կարօտութիւն ունին:

ԳԼ. 9: Ուսումնարաններում երկսեռի մանուկ-
ները միասին պէտք է կրթուին:

ԳԼ. 10: Ուսումնարաններում ուսումը պէտք
է ընդհանուր լինի:

ԳԼ. 11: Մինչև այսօր զեռ ուսումնարանները
չեն համապատասխանում իւրեանց նպատակին:

ԳԼ. 12: Ուսումնարանները կարող են բարե-
կարգուիլ:

ԳԼ. 13: Ուսումնարանը բարեկարգուելու է, երբ
ամենայն բան ճշտութեամբ կ'կարգաւորուի:

ԳԼ. 14: Ուսումնարանի ճիշդ կարգաւորու-
թիւնը պէտք է բնութեան կարգաւորութեան նը-
մանի:

"Միւս հետեւեալ գլուխները (15-33) ճառա-
բանում են, թէ ի՞նչպէ՞ս ուսման և ուսուցանելու
միջոց յաւանգորդութեամբ, դաստիարակութեան հիմ-
քին հիմնադրել և ամրապնդել եղանակի
կանոնների մասին, — գիտութեանց, ճարտարու-
թեանց, լեզուների և բարոյական կրթութեան
մասին, — ինչպէ՞ս ուսման մասին, ուսումնա-
բանների աստիճան առ աստիճան բարձրանալու մասին,
ընդհանուր ուսումնարանական կարգի մասին և այն
պայմաններէ մասին, որոնք հարկաւոր են այս բոլոր
պահանջները կատարելու համար:

"Այժմ ընթերցողներին ծանօթացնենք այս
գրութեան գլխաւոր պարունակութեան հետ, ա-
ռանձին առանձին գլուխներից ծաղկաբաղ ա-
նկով:

(Շարունակել)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐ- ԺԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ի ԲԵՌԼԻՆ:

Գերմանիոյ 18-րդ "Ընդհանուր մանկավարժական
Ժողովին" ներկայ գտանուող չորս հազարի չափ ան-
դամներէն, որք անցեալ տարուայ մայիս ամսին՝
դրթէ ամեն լուսաւորեալ երկիրներէն գումար-

ուած էին Բեռլին, մինն ևս եւ էի բախտի բերմամբ,
Ինչ որ ասուած էր այդ Ժողովի մէջ, Եւրոպական
լրագիրներն՝ արդէն վաղուց հնչեցին ի լուր աշ-
խարհի, բայց մեր ազգային լրագիրներէն՝ որքան
ինձ յայտնի է, զեռ ոչ մինը հաշիւ տուաւ նորա
մասին. ուստի ես համարձակութիւն կատնում
նա և պարտք կը համարիմ, զէթ համառօտ բա-
նիք տեղեկութիւն մը գրել այդ Ժողովի վերա-
բերմամբ:

Եթէ ընդհանրապէս ճշմարիտ է, որ Գերմանա-
ցիք աշխատասէր են, ապա ճշմարիտ է նաեւ՝ որ
այդ ազգի զանազան դասերէն ուրիշ ոչ մինը գու-
ցէ աւելի արժանի է այդ գովեստին՝ ինչպէս Գեր-
մանական ուսումնականաց դասը, որոյ ինքնազոհ
անձնութիւնը ուսման և ջանասէր եռանդը
պարապման մէջ արդէն բովանդակ աշխարհին
յայտնի տուակ դարձած է: Սկսեալ ամենարարձր
ուսումնարաններէն, որք բազմաթիւ համալսարան-
ներու մէջ գիտութեան դժուարագոյն խնդիրները
լուծելու կը ձգնին, մինչև ամենայնտին դիւղա-
կան դպրոցի վարժապետը, որ գիտութեան ու-
րիշ և բէշ միայն կաւանդէ աշակերտներուն, ամէնքը
իրենց սուրբ կոչման կարեւոր խորհուրդը միապէս
կը հասկանան, ամէնքը կաշխատին հաւասար փու-
թով լոյս տարածել ո՛ր և որչափ որ կարելի է,
և ամէնքը մի դրօշ ունին, որոյ վրայ գրուած է
ԳԵՐՄԱՆԻԱՆԸ ՓՐԿՈՒԹԻՒՆ Է, ՏԳԻՏՈՒԹԻՒՆԸ —
ԿՈՐՈՒՄՅ: Այդպէս նորա միաբան կազմէն ազգի
վրայ, և թէ մեծ քաղաքներու և թէ հեռաւոր
փոքրիկ գիւղերու մէջ հանապազ կը քարոզեն,
թէ "Այս դարս ուսում կը պահանջէ մեզմէն,
խելք, միտք, գիտութիւն, և թէ՛ առանց ուսման
մարդավայել կեանք և բախտ չըկայ": Իբրեւ անձ-
նուէր ազգասէր պաշտօնեայք՝ նորա ոչինչ չեն
խնայեր իրենց ազգի մոռուոր և նիւթական յա-
ռաջադիմութեան համար, և զարմանալի արիու-
թեամբ և նոյնգունակ փութով նախ ինքեանք
կուսանին, և ապա օր և դիշեր հնար կ'որոնեն
գիտութեան գանձերը ընդհանուր սեփականութիւն
շինելու, վարէն մինչև վեր բովանդակ ազգին հա-
ղորդելու, որպէս զի հայրենիքն անկիրթ գաւակ
չունենայ: